ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՍԻՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (2001–2022)

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ
armanmaloyan1976@gmail.com

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ Սիւնիքի մարզը կազմաւորուել է 1995ին: Մարզն իր անունը ստացել է Մեծ Հայքի Սիւնիք նահանգի (աշխարհ) անունից: Ըստ *Աշխարհացոյցի*՝ Սիւնիքը Մեծ Հայքի իններորդ նահանգն էր, որն ունէր տասներկու գաւառ: Սիւնիքը արեւմուտքում եւ հիւսիս-արեւմուտքում սահմանակից էր Այրարատին, հիւսիս-արեւելքում եւ արեւելքում՝ Արցախին, հարաւում եւ հարաւ-արեւելքում՝ Վասպուրականին: Սիւնեաց աշխարհն ընդգրկում էր Սեւանայ լճի աւազանը, Արփա գետի աւազանի մեծ մասը, Որոտան եւ Հակարի գետերի աւազանները, Նախճաւան եւ Երնջակ գետերի վերին հոսանքների շրջանները: Սիւնիքը Մեծ Հայքի այն նահանգն է, որի մեծագոյն մասն ընդգրկուած է ներկայիս ՀՀի կազմում: Սիւնիքի մարզը ներառում է Գորիսի (Սիւնիքի Հաբանդ գաւառը, Ծղուկ գաւառի մի մասը), Կապանի (Սիւնիքի Ձորք գաւառը, Բաղք գաւառի մի մասը), Մեղրիի (Սիւնիքի Արեւիք գաւառը), Սիսիանի (Սիւնիքի Ծղուկ գաւառի մեծ մասը) նախկին վարչական շրջանները: Ըստ ցամաքային տարածքի՝ Սիւնիքը ՀՀի ամենախոշոր մարզն է: Տարածքը շուրջ 4506 քառ. կմ է եւ կազմում է ՀՀի տարածքի շուրջ 15%ը: Մարզկենտրոնն է Կապան քաղաքը: Մարզն ունի

եօթ քաղաքային (Ագարակ, Գորիս, Դաստակերտ, Կապան, Մեղրի, Սիսիան, Քաջարան) եւ 102 գիւղական բնակավայր (ընդամէնը՝ 135 բնակավայր): Այն ՀՀի ամենալեռնային մարզն է: Նրա ամենաբարձր գագաթը՝ Կապուտջուղը (3906 մ) ՀՀի՝ բարձութեամբ երկրորդ լեռնագագաթն է:

Սիւնիքի մարզը հիւսիսից սահմանակից է Վայոց Ձորի մարզին, արեւելքից՝ Արցախին, հարաւից՝ Իրանի Իսլամական Հանրապետութեանը, արեւմուտքից՝ Նախիջեւանին:

Մարզի ամենամեծ քաղաքը ՀՀ հարաւարեւելեան տարածաշրջանի ամենախոշոր քաղաք Կապանն է:

Սիւնիքի մարզի տարածքը կազմում է Հայ Առաքելական Եկեղեցու Սիւնեաց թեմը[1], որը ստեղծուել է 1988ին ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա. Պալճեանի կոնդակով եւ վերակազմաւորուել 1996 Մայիսի 30ին: Թեմի առաջնորդանիստը Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին է:

Սիւնիքի մարզը հարուստ է բնութեան եւ պատմամշակութային յուշարձաններով[2]:

Դեռեւ վաղ միջնադարում ձեւաւորուած հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը հայոց բազմադարեայ մշակոյթի ինքնատիպ եւ կարեւոր բնագաւառներից է: Հայկական եկեղեցական ճարտարապետութեան բազմաթիւ կառոյցներ աչքի են ընկնում իրենց իւրօրինակութեամբ, գեղարուեստական հարուստ աւանդների կիրառմամբ ու զարգացմամբ, ներքին ու արտաքին յարդարանքի ինքնատիպ լուծումներով, կառուցողական արուեստի բարձր մակարդակով:

Դեռեւ վաղ միջնադարից Սիւնեաց աշխարհը եղել է Հայոց Աշխարհի՝ իւրօրինակ ու զարգացած ճարտարապետութիւն ունեցող նահանգներից մէկը[3]: Հայ միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան պատմութեան մէջ, յիրաւի, պատուաւոր տեղ ունի Սիւնեաց ճարտարապետական դպրոցը՝ իր քանքարաշատ ճարտարապետերով, շինարար ու խաչքարագործ վարպետներով: Այս ճարտարապետական դպրոցի ներկայացուցիչները[4] հայ միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան անդաս-

---

[1] ՀՀում Հայ Առաքելական Եկեղեցու միւս թեմերն են.- Արարատեան Հայրապետական թեմ, Շիրակի, Գուգարաց, Արմաւիրի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունեաց, Վայոց ձորի, Տաւուշի, Արթիկի եւ Մասեացոտնի թեմեր:

[2] Ա. Մալոյեան, Մ. Մակարեան, Օ. Դուդումեան, *Հայաստանի նշանաւոր վանքեր եւ եկեղեցիներ*, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2020, էջ 138:

[3] Մ. Մ. Հասրաթեան, *Սիւնիքի XVII–XVIII դդ. ճարտարապետական համալիրները*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1973, էջ 7:

[4] Սիւնեաց ճարտարապետական դպրոցի ներկայացուցիչների եւ ճարտարապետական կոթողների մասին տե՛ս՝ Ս Բարխուդարեան, *Միջնադարեան հայ ճարտարա-*

տանում թողել են ուրոյն յետագիծ եւ հայ եկեղեցական ճարտարապետութիւնը հարստացրել գեղակերտ կոթողներով: Սիւնեաց ճարտարապետական դպրոցի եկեղեցական ճարտարապետութեան կառոյցներն ուշագրաւ եւ արժէքաւոր են, իրենց ինքնատիպութեամբ լրացնում եւ ամբողջացնում են հայ եկեղեցական ճարտարապետութեան համապատկերը: Իր իւրօրինակ ու ինքնամփոփ հասարակական-պատմական միջավայրով ու դրան բնորոշ կառոյցներով առանձնանում է նաեւ Սիւնիքի ժողովրդական ճարտարապետութիւնը[5]:

Յօդուածում կը ներկայացնենք ՀՀ Սիւնիքի մարզի նորակառոյց եկեղեցիները, անդրադառնալով նրանց ճարտարապետական ձեւերին, կառուցման պատմութեանը եւ յարակից այլ հարցերի:

1991ից յետոյ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնում հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: ՀՀ մարզերում եւ քաղաքամայր Երեւանում կառուցուեցին նոր եկեղեցիներ: Անմասն չմնաց նաեւ Սիւնիքի մարզը:

ԿԱՊԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանի Հանրապետութեան հոյակերտ եկեղեցական կառոյցներից է Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին:

Սիւնիքի մարզկենտրոն Կապան (մինչեւ 14.11.1990՝ Ղափան) քաղաքը գտնուում է Ողջի գետի հովտում, Խուստուփ լեռան հիւսիսային ստորոտին՝ հարաւից եւ հիւսիսից շրջապատուած Մեղրու եւ Բարգուշատի լեռներով, ծովի մակարդակից մօտ 910–1050մ[6] բարձրութեան վրայ, Երեւանից դէպի հարաւ-արեւելք՝ մօտ 300 կմ հեռաւորութեան վրայ:

Մարզկենտրոն Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հիմնարկէքի արարողութիւնը կատարուել է դեռեւ 1996 Նոյեմբերի 25ին երջանկայիշատակ Գարեգին Ա. Սարգիսեան ամենայն հայոց կաթողիկոսի (1995–

պետներ եւ քարգործ վարպետներ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1963. նաեւ՝ Հ. Իսաբէկեան, *Հայկական ռենեսանսի ճարտարապետութիւնը*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1980. նաեւ՝ Ս. Մնացականեան, *Վարպետաց վարպետներ, Մանուէլ, Տրդատ, Մոմիկ*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982. նաեւ՝ Վ. Յարութիւնեան, *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն, բուհական ձեռնարկ*, «Լոյս» պետ. հրատ., Երեւան, 1992. նաեւ՝ *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն, հտր. 2* (2002), *հտր. 3* (2004), «Գիտութիւն» հրատ., Երեւան:

[5] Ն. Ծ. Պապուխեան, *Սիւնիքի ժողովրդական ճարտարապետութիւնը*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1972, էջ 9:

[6] *Հայաստանի Հանրապետութեան բնակավայրերի բառարան*, ՀՀ կառավարութեանն առընթեր անշարժ գոյքի կադաստրի պետական կոմիտէի «Գէոդեզիայի եւ քարտէզագրութեան կենտրոն» ՊՈԱԿի հրատ., Երեւան, 2008, էջ 107, http://syunik.mtad.am/u_files/file/syunik/1Kapan_qaghaq.pdf մատչում՝ 16. 10. 2022:

99) հանդիսապետութեամբ: Եկեղեցու կառուցման հովանաւորութիւնը ստանձնել էր Սիւնիքի մարզպետարանը, որի ներդրումն ամբողջացել է ժողովրդի կատարած հանգանակութեամբ ու միքանի բարեպաշտ հայորդիների նուիրատուութիւններով:

Այն ՀՀ անկախութիւնից յետոյ Սիւնիքի մարզում կառուցուած առա-ջին եկեղեցին է: Եկեղեցին կառուցուել է ճարտարապետ Արտիոմ Գրիգորեանի նախագծով[7]: Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին արտաքուստ՝ քառանկիւն, ներքուստ՝ խաչաձեւ կենտրոնագմբէթ յօրինուածքով, աւագ խորանի հիւսիսային եւ հարաւային կողմերին մէկական աւանդատներով կառոյց է: Ունի երեք մուտք՝ արեւմտեան, հիւսիսային ու հարաւային կողմերից: Հարաւային պատը, որը մշակուած է մէկ զոյգ «հայկական խորշերով», արեւմտեան եւ արեւելեան անկիւններին ունի եկեղեցու ընդհանուր ծաւալից փոքր-ինչ դուրս եկած գեղակերտ զանգաշտարակներ: Եկեղեցին լուսաւորւում է բազմանիստ թմբուկին եւ պատերին թողնուած լուսամուտներից: Եկեղեցին երեսպատուած է բաց մանուշակագոյն ու կաթնաթոյր երանգի կրացուած մարմարի սրբատաշ սալաքարերով: Եկեղեցու աւագ խորանը գեղազարդել է պատկերել գեղանկարիչ Տիգրան Յակոբեանը: Նա խորանի աջ եւ ձախ կողմերին է Ս. Մեսրոպ Մաշտոցին ու Ս. Սահակ Պարթեւին, իսկ աւելի խորքում՝ մէջտեղում՝ Յիսուս Քրիստոսին, իսկ Նրա աջ եւ ձախ կողմերին՝ վեցական առաքեալներ:

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու նաւակատիքի արարողութիւնը տեղի է ունեցել 2001 Դեկտեմբերի 1ին՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքեալների տօնի օրը, երբ Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի ձեռքով օծուեց ու սրբագործուեց եկեղեցին[8], սուրբ սեղանը եւ սուրբ խորանը, ապա թեմակալ առաջնորդ Աբրահամ եպս.ն օծեց մկրտութեան սուրբ աւազանը: Եկեղեցու օծման եւ սրբագործման հանդիսութիւնն աւարտուեց մատաղի օրհնութեամբ եւ ժողովրդական տօնախմբութեամբ:

2016 Սեպտեմբերի 26ին եկեղեցու բակում բացուեց խաչքար-յուշաղբիւր[9]:

---

[7] Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում Կապանի տարածաշրջանի հո-գեւոր հովիւ, արժ. Խաչատուր քինյ. Հայրապետեանին՝ եկեղեցու վերաբերեալ լրացուցիչ տեղեկատուութիւն սիրայօժար մեզ տրամադրելու համար:

[8] Արթուր սրկ. Կարապետեան, «Օծուեց Կապանի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին», *Էջմիածին*, ԺԲ:2001, էջ 120:

[9] Ա. Յարութիւնեան, «Խաչքար-յուշաղբիւր՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում», https://syuniacyerkir.am/khachqar-hushakhbyur-surb-mesrop-mashtots-ekekhetsu-bakum. նաեւ՝ «ՀՀ Սիւնիքի մարզպետ Սուրիկ Խաչատրեանը մասնակցել է Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում կանգնեցուած խաչքար-

ԴԱՒԻԹ ԲԷԿԻ Ս. ԳԱՅԻԱՆԷ ԵԿԵՂԵՑԻ

Սիւնիքի մարզի նորակառոյց եկեղեցիներից է Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիր, ականաւոր ազգային ու պետական գործիչ Արամ Մանուկեանի հայրենի Դաւիթ Բէկ գիւղի Ս. Գայիանէ եկեղեցին:

Դաւիթ Բէկ գիւղը գտնւում է մարզկենտրոն Կապանից մօտ 25 կմ (հիւսիս-արեւելք) հեռաւորութեամբ, ծովի մակերեւոյթից շուրջ 1150 մ բարձրութեան վրայ[10]:

Ս. Գայիանէ եկեղեցին կառուցուել է 2008ին[11], յայտնի գործարար Միրիկ Մնացականեանի բարերարութեամբ: Եկեղեցին խաչաձեւ կենտրոնագմբէթ կառոյց է՝ նուրբ ու գրաւիչ համաչափութիւններով: Կառուցուած է սրբատաշ քարերով: Գմբէթին կան երկարաւուն պատուհաններ, մուտքը արեւմտեան կողմից է: Տարածքը շրջափակուած է ոչ-շատ բարձր ցանկապատով, բարեկարգ է ու խնամուած:

ՔԱՇՈՒՆԻԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Քաշունի գիւղը գտնւում է Գորիս քաղաքից մօտ 55 կմ դէպի հարաւ-արեւմուտք, իսկ մարզկենտրոն Կապանից մօտ 52 կմ հիւսիս-արեւմուտք

յուշաղբիւրի բացման արարողութեանը», http://syunik.mtad.am/news/item/2016/09/26/xachqari_bacum/ մատչում՝ 15.10.2022:

[10] *Հայաստանի Հանրապետութեան բնակավայրերի բառարան*, էջ 66:

[11] Տէր Արարատի հրապարակած ցուցակում Ս. Գայիանէ եկեղեցու կառուցման թուական է նշուած 2007ը (Արարատ քհն. Պողոսեան, «Նախանձախնդիր Հայրապետը», *Էջմիածին*, ԺԱ:2011, էջ 88 (https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf մատչում՝ 23.10.2022):

հեռաւորութեամբ, ծովի մակերեւոյթից շուրջ 1850 մ բարձրութեան վրայ: 2015ից Քաշունին Տաթեւ խոշորացուած համայնքի բնակավայրերից է: Ցաւօք, Քաշունի գիւղը ՀՀի այն բնակավայրերից է, որտեղ վաղուց նորածիններ լոյս աշխարհ չեն գալիս, իսկ բնակիչների թիւն էլ միայն փոքրանում է: 2015ի տուեալներով՝ գիւղում ապրում էր 4 ընտանիք, որոնց անդամների թիւը միասին հասնում էր 10ի[12]:

Նրբակերտ եկեղեցու կառուցումը հովանաւորել են ծնունդով Տաթեւ գիւղից Քաջիկ Կարապետեանը (1939–2004)[13], ինչպէս նաեւ Արարատ ու Արմէն Սարգսեան եղբայրները[14]: Սուրբ Սարգիս աղօթատուն-եկեղեցին ուղղանկիւն յատակագծով դահլիճ է, ունի համեստ չափսեր (5 x 4 մ), կառուցուել է 2002ին: Միակ մուտքը արեւմտեան կողմից է: Եկեղեցու տանիքը, դռան եւ պատուհանների շրջանակները սրբատաշ բազալտից են, իսկ ամբողջ շարուածքը՝ տեղական մշակուած քարերով: Ներսի պատերին կան աստուածաշնչեան թեմաներով որմնանկարներ:

ՇԻՆՈՒՀԱՅՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի՝ առայժմ վերջին նորակառոյց եկեղեցին Շինուհայրի Սուրբ Գրիգոր Տաթեւացի եկեղեցին է:

---

[12] Յասմիկ Համբարձումեան, «Քաշունի. գիւղ, որտեղ մահանում են, բայց չեն ծնւում», https://www.panorama.am/am/news/2015/03/12/qashuni/95091 մատչում՝ 05.11.2022:

[13] Քաջիկ Մնացականեանի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ս. Մ. Պողոսեան, *Տաթեւի համառօտ պատմութիւն*, Զանգակ-97 հրատ., Երեւան, 2007, էջ 131-34:

[14] Սամուէլ Ալեքսանեան, «Մալդաշ, որ հիմա Քաշունի է կոչւում. մերձիմահ գիւղի դեռեւս բաբախող սիրտը՝ Սուրբ Սարգիս մատուռը», https://syuniacyerkir.am/maldash-or-hima-qashuni-e-kochvum-merdzimah-gyukhi-dere%D6%82s-babakhokh-sirty-surb-sargis-matury մատչում՝ 15.10.2022:

Շինուհայր գիւղը գտնւում է Գորիս քաղաքից մօտ 20 կմ հարաւ-արեւմուտք, իսկ մարզկենտրոն Կապանից մօտ 90 կմ դէպի հիւսիս հեռաւորութեամբ, ծովի մակերեւոյթից շուրջ 1500 մ բարձրութեան վրայ:

Շինուհայրի եկեղեցու կառուցման նախաձեռնողը Տաթեւի վանքի վանահայր Միքայէլ վարդապետ Գէորգեանն է: Ըստ Միքայէլ վարդապետի պնդման՝ եկեղեցու կառուցման տեղում նախկինում սրբավայր է եղել, որի մասին վկայող խաչքարը պահպանուել է:

Ճարտարապետական նախագիծը կազմել է Աշոտ դպիր Յակոբեանը: Եկեղեցու հիմնօրհնէքը 2018 Մայիսի 17ին հանդիսաւորութեամբ կատարել է Ս. Էջմիածնի լուսարարապետ Յովնան եպիսկոպոս Յակոբեանը[15]: Նորակերտ աղօթատունը մէկտեղել է հայ աւանդական եկեղեցական ճարտարապետութեան լաւագոյն եւ Սիւնիքի ժողովրդական ճարտարապետութեան շինարարական աւանդոյթները: Միանաւ բազիլիկ եկեղեցին ունի 17 մ երկարութիւն, 10 մ լայնութիւն եւ 11 մ բարձրութիւն (խաչի հետ միասին՝ 13 մ): Եկեղեցին կառուցուել է բարեպաշտ հայորդիների հանգանակութեամբ եւ նուիրատուութիւններով: Տեղական շինաքարերով կառուցուած եկեղեցին հիացնում է սրբատաշ ու «գորիսեան» շարուածքների արհեստավարժ համադրութեամբ: Եկեղեցին կառուցուել է մշակոյթի կենտրոնի եւ մանկապարտէզի մերձակայ հրապարակում:

[15] Ս. Ալեքսանեան, «Անյիշելի հին, բայց եւ յաւերժող Շինուհայրի պաշտամունքային վայրերը», https://syuniacyerkir.am/anhisheli-hin-bayts-e%D6%82-haverzhokh-shinuhayri-pashtamunqayin-vayrery-1 մատչում՝ 22.10.2022:

2022 Հոկտեմբերի 8ին[16], Սիւնիքի մարզպետի, Տաթեւի համայնքապետի, Գորիսի համայնքապետի, հոգեւոր այրերի, մեծաթիւ ուխտաւորների եւ հիւրերի ներկայութեամբ, նորակառոյց եկեղեցու օծման հանդիսաւոր արարողութիւնը կատարեցին Ս. Էջմիածնի լուսարարապետ, Մուշեղ եպս. Բաբայեանն ու Ս. Էջմիածնի վանորէից տեսուչ Արտակ եպս. Տիգրանեանը:

ՇԱՔԻԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Սիւնիքի մարզի նորակառոյց քրիստոնէական սրբավայրերից է Շաքիի Սուրբ Աստուածածին եկեղեցին:

Շաքի գիւղը գտնւում է Սիսիան քաղաքից մօտ 8 կմ հիւսիս-արեւելք, իսկ մարզկենտրոն Կապանից մօտ 110 կմ հիւսիս-արեւմուտք հեռաւորութեամբ, ծովի մակերեւոյթից շուրջ 1710 մ բարձրութեան վրայ[17]:

Եկեղեցին կառուցուել է 2004ին[18]: Եկեղեցու կառուցումը հովանաւորել է ծնունդով մեղրեցի, որոշ ժամանակ Շաքիում բնակուած, այնուհետեւ Մոսկուա հաստատուած Նուէր Օհանեանը: Եկեղեցու կառուցման գործում իրենց մասնակցութիւն են ունեցել նաեւ համայնքի բնակիչները: Եկեղեցին ունի հայկական վաղմիջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան յայտնի տիպերից խաչաձեւ կենտրոնագմբէթ փոքր եկեղեցիներին

---

[16] «Օծուել է Շինուհայր գիւղի Սբ Գրիգոր Տաթեւացի եկեղեցին», https://news.am/arm/news/724243.html, https://www.1in.am/3175357.html մատչում՝ 22.10.2022. նաեւ՝ Ս. Ալեքսանեան, «Շինուհայրի գեղաշէն եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Տաթեւացու անունով, օծուեց սրբալոյս միւռոնով», https://syuniacyerkir.am/shinuhayri-gekhashen-ekekhetsin-surb-grigor-tate%D6%82atsu-anunov-otsvets-srbaluys-myuronov մատչում՝ 22.10.2022:

[17] *Հայաստանի Հանրապետութեան բնակավայրերի բառարան*, էջ 157:

[18] Տէր Արարատ քհն. Պողոսեան, «Նախանձախնդիր Հայրապետը», *Էջմիածին*, ԺԱ:2011, էջ 86, https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf մատչում՝ 16.10.2022:

բնորոշ կառուցուածք ու համաչափութիւններ: Եկեղեցին կառուցուած է սրբատաշ ու կիսամշակ քարերով: Տարածքը բարեկարգ է ու խնամուած: Առայժմ չունի մշտական խորհրդակատար քահանայ: Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները բաւարարում է երթեւեկ քահանան:



ՏՈԼՈՐՍԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑԻ

Սիւնիքի մարզի յաջորդ նորակերտ եկեղեցական կառոյցը Տոլորսի Ս. Հռիփսիմէ եկեղեցին է:

Տոլորս գիւղը գտնւում է Սիսիան քաղաքից մօտ 8 կմ հարաւ, իսկ մարզկենտրոն Կապանից մօտ 120 կմ հիւսիս-արեւմուտք հեռաւորութեամբ, ծովի մակերեւոյթից շուրջ 1660 մ բարձրութեան վրայ[19]:

Հին Տոլորս գիւղն ունէր Ս. Հռիփսիմէ անունով բազիլիկ եկեղեցի (կառուցուած՝ 1861ին), որը խորհրդային տարիներին օգտագործուել է ոչ-հոգեւոր նպատակներով: 1970ականներին, երբ կառուցուեց Տոլորսի ջրամբարը, Ս. Հռիփսիմէ եկեղեցին չտեղափոխուեց ու չվերաշարուեց, այլ յանձնուեց բախտի եւ ջրային տարերքի քմահաճոյքին: Տարուայ մէջ ընդամէնը մէկ-երկու ամիս, երբ ջրամբարում ջրի մակարդակն իջնում է, եկեղեցին հասանելի է դառնում այցելուներին, իսկ մնացած ամիսներին եկեղեցին մինչեւ տանիքը ծածկւում է ջրով, ուստի եկեղեցուն մօտենալ հնա-րաւոր է լինում միայն նաւակով:

Տարիներ անց տոլորսեցիները որոշեցին նոր եկեղեցի կառուցել հենց ջրամբարի հարեւան բարձունքին՝ ջրասոյզ Ս. Հռիփսիմէից ոչ-հեռու[20]:

---

[19] *Հայաստանի Հանրապետութեան բնակավայրերի բառարան*, էջ 197:

[20] Մարիաննա Փայտեան, «Խորտակուած եկեղեցու առեղծուածը. ինչու Սիւնիքում վանքը ջրի տակ յայտնուեց,

Նոր եկեղեցու կառուցման գաղափարը մտայղացել էր երեւանաբնակ տոլորսեցի Ալեքսանդր Սուքիասեանը. նա որոշել էր գիւղի մասին գիրք տպագրել ու վաճառքից գոյացած հասոյթով իրականացնել իր փափաքը: Սկզբնական տարբերակով պէտք է կառուցուէր մի փոքրաչափ աղօթատուն՝ 25 քառ. մ ընդհանուր տարածքով ու 10 մ բարձրութեամբ, սակայն յետագայում որոշուեց կառուցել միքանի անգամ աւելի մեծ մակերեսով եկեղեցի, ինչպէս նաեւ զանգակատուն ու մատաղատուն:

Եկեղեցու հիմնարկէքը կատարուել է 2012 Յունիսին՝ ձեռամբ Ս. Էջմիածնի լուսարարապետ, Յովնան եպիսկոպոս Յակոբեանի[21], իսկ խաչօրհնէքի արարողութիւնը՝ նոյն տարուայ Դեկտեմբերին, երբ ներքին յարդարման ու տարածքի բարեկարգման աշխատանքները դեռ չէին աւարտուել: Եկեղեցու կառուցումն աւարտուել է նոյն տարուայ վերջին: 2014 Հոկտեմբերի 11ին կատարուել է եկեղեցու զանգի տեղադրման արարողութիւնը[22]: Նորակերտ եկեղեցու կառուցումն իրականացել է հիմնականում Ալեքսանդր Սուքիասեանի որդիներ Տիգրան ու Վարդան Սուքիասեաններիի բարերարութեամբ: Շինարարական աշխատանքների իրականացմանն ու ֆինանսաւորմանն իրենց նպաստն են բերել նաեւ համայնքի բնակիչներն ու նախկին տոլորսեցիները:

Եկեղեցին ուղղանկիւն յատակագծով դահլիճ է, նրան կից է խաչաձեւ կենտրոնագմբէթ փոքր եկեղեցիներին բնորոշ կառուցուածք ու համաչափութիւններ ունեցող զանգակատունը: Եկեղեցին կառուցուած է սրբատաշ քարերով[23]:

---

https://webcache.googleusercontent.com/search?q=cache:99PGV7I4KosJ:https://armeniasputnik.am/20200815/xortakvac-ekexecu-arexcvacy-inchu-syuniqum-vanqy-jri-tak-haytnvec-24112195.html&cd=16&hl=hy&ct=clnk&gl=am, մատչում՝ 24.09.2022:

[21] Ա. Յովակիմեան, «Նոր եկեղեցին կը կրի հնի անունը՝ Սուրբ Հռիփսիմէ», https://a1plus.am/hy/article/60882 մատչում՝ 16.10.2022. նաեւ՝ «Տոլորսցիները ջրամբարի տակ մնացած եկեղեցու փոխարէն նորն են կառուցում», https://armenpress.am/arm/print/686548/ մատչում՝ 16.10.2022. նաեւ՝ Հ. Գէորգեան, «Տոլորս գիւղում կառուցւում է նոր եկեղեցի», http://www.irates.am/ru/1341565268 մատչում՝ 16.10.2022:

[22] «ՀՀ Սիւնիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորեանը մասնակցել է Տոլորսի եկեղեցու զանգի տեղադրման հանդիսաւոր արարողութեանը», http://syunik.mtad.am/news/item/2014/10/15/tolors/avto մատչում՝ 16.10.2022:

[23] 2019ին Ս. Հռիփսիմէ եկեղեցու յարակից բարձունքում դէպի երկինք խոյացաւ երկաթակերտ խաչը՝ տոլորսեցի Բաղամ Յովսէփեանի դուստրերի ու ժառանգների անունից եւ հովանաւորութեամբ: Խաչի օծման արարողութիւնը կատարուեց 2019 Օգոստոսի 25ին Սիսիանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հոգեւոր հովիւ, Պարգեւ քահանայ Զէյնալեանի ձեռամբ («Խաչի օծում՝ Սիսիան համայնքի Տոլորս գիւ-

Տոլորսի Ս. Հռիփսիմէ եկեղեցին առայժմ չունի մշտական խորհրդակատար քահանայ: Համայնքի անդամների հոգեւոր պահանջմունքները բաւարարում է երթեւեկ քահանան (Սիսիանից):

ԴԱՐԲԱՍԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի յաջորդ նորակառոյց քրիստոնէական սրբավայրը Սիսիանի տարածաշրջանի Դարբասի Սուրբ Ստեփանոս եկեղեցին է:

Գիւղը գտնւում է մարզկենտրոն Կապանից մօտ 115 կմ հիւսիս-արեւմուտք, Սիսիան քաղաքից՝ մօտ 25 կմ հարաւ-արեւելք, ծովի մակերեւոյթից շուրջ 1500 մ բարձրութեան վրայ[24], Որոտանի աջակողմեան վտակ Լոր գետի ձախ ափին:

Ըստ գիւղի հնաբնակների տեղեկութիւնների՝ Դարբասն ունեցել է եօթ սրբավայր-եկեղեցի, ընդ որում՝ առաջին եկեղեցին 1272ին կառուցել են Օրբէլեան Տարսայիճ իշխանն ու իր կին Մինա Խաթունը: Երկրորդ եկեղեցին, որը թուագրւում է 1288, եւ կառուցել են Օրբէլեանները[25]: Սակայն 1931ի Զանգեզուրի աւերիչ երկրաշարժի հետեւանքով վերջնականապէս խոնարհուել է նաեւ գիւղի կիսաւեր մնացած միակ՝ Սուրբ Ստեփանոս եկեղեցին:

Գործող եկեղեցի ունենալու անհրաժեշտութիւնը զգում էր ոչ միայն Դարբասը, այլեւ Ձորերի (Շամբ-Դարբաս-Լոր տարածաշրջան) ամբողջ

ղում», https://syuniacyerkir.am/khachi-otso%D6%82m-sisiani-hamaynqi-tolors-gyo%D6%82kho%D6%82m մատչում՝ 15.10.2022):

[24] *Հայաստանի Հանրապետութեան բնակավայրերի բառարան*, էջ 66:

[25] Գուրգէն Դարբասցի-Ալավերդեան (Դագուր, Գ. Ալավերդեան), *Ըղուվերդ–Դարբաս*, Զանգակ–97, Երեւան, 2010, էջ 53:

ժողովուրդը: Ի կատարումն իրենց փափաքի ու ժողովրդի ցանկութեան՝ մոսկուաբնակ դարբասցի գործարար Արամ եւ Արմէն Ստեփանեան եղբայրները ձեռնամուխ եղան հայրենի Դարբաս գիւղում նոր՝ Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցմանը: 2010ին գործարար եղբայրները Շամբում հիմնում են պահածոների եւ «Տատնի» հանքային ջրերի գործարանները: Նրանց բարերարութեամբ գիւղում բացուել եւ գործում են նաեւ թանգարան եւ արուեստի դպրոց:

Եկեղեցու հիմնարկէքի արարողութիւնը կատարուել է 2007ին: Կառոյցը նախագծել են ճարտարապետեր Նունէ Պետրոսեանը, Մարտին Զորոյեանը եւ Մանուէլ Համբարձումեանը: Եկեղեցին հայ աւանդական ու արդի եկեղեցական ճարտարապետութեան լաւագոյն աւանդոյթների առինքնող ներդաշնակութիւն է: Ունի խաչաձեւ կենտրոնագմբէթ յօրինուածք ու համաչափութիւններ, կից՝ զանգակատուն: Այն կառուցուած է երկգոյն սրբատաշ քարերի՝ վարպետօրէն կատարուած գունային համադրութեամբ: Եկեղեցու կառուցման գործում իրենց գնահատելի ներդրումն են ունեցել համայնքի նախկին ու ներկայ բնակիչներ, բարեգործներ, զինուորականներ, յատկապէս՝ տեղացի շնորհալի վարպետեր ու բանուորներ:

Ս. Ստեփանոս եկեղեցու նաւակատեաց հանդէսը կատարուել է 2010 Մայիսի 5ին[26]: Այդուհետ ամէն տարուայ այդ օրը դարբասցիները որոշել են նշել որպէս իրենց բնօրրանի օր: Տօնակատարութիւններն սկսւում են օրհնութեան կարգով, մատաղի հիւրասիրութեամբ, ապա հանդիսաւոր տրամադրութեամբ շարունակւում ելոյթներով (Սիսիանի «Համօ Սահեանի անուան մշակութային կենտրոն» ՀՈԱԿի (Համայնքային ոչ-առեւտրային կազմակերպութիւն) ժողովրդական գործիքների համոյթ, Դարբասի արուեստի դպրոցի մանկական հոգեւոր երգչախումբ, մանկապարտէզի սաներ եւն.), արուեստի դպրոցի սաների ելոյթներով ու ձեռքի աշխատանքների ցուցահանդէս-վաճառքով, զուարճանքներով:

Նորաշէն եկեղեցին ոչ միայն Դարբասի, այլեւ մերձակայ գիւղերի բնակչութեան համախմբման եւ հոգեւոր կեանքի վերածննդի սկիզբ է դրել: Եկեղեցու շրջակայքը բարեշէն է ու խնամուած: Ս. Ստեփանոս եկեղեցին գործող եկեղեցի է, որտեղ քահանայագործում է Դարբասի եւ մերձակայ գիւղերի հոգեւոր հովիւ Ընծայ քահանայ Միրզոյեանը:

---

[26] Վ. Օրբելեան, «Դարբասում համաժողովրդական տօնախմբութիւն էր՝ գիւղի հոգեւոր վերածննդի օրուայ կապակցութեամբ», https://syuniacyerkir.am/darbasum-hamazhokhovrdakan-tonakhmbutyun-er-gyukhi-hoge%D6%82or-veratsnndi-orva-kapaktsutyamb մատչում՝ 15.10.2022:

ԱՅԼ ՍՐԲԱԿԱՌՈՅՑՆԵՐ

Բացի վերոյիշեալ եկեղեցիներից՝ 1991ից իվեր Սիւնիքի մարզում կառուցուել են նաեւ աւելի համեստ չափսերով փոքրածաւալ աղօթատուն-սրբավայրեր, որոնք յայտնի են որպէս մատուռներ: Հարկ ենք համարում նշել, որ անկախացումից յետոյ ՀՀում կառուցուած բազմաթիւ փոքրածաւալ եկեղեցական կառոյցներ կոչուել են մատուռներ ընդհանուր անուամբ: Այդ կառոյցների համեստ չափերն ի նկատի ունենալով՝ դրանց համարում են մատուռներ, ոչ թէ եկեղեցիներ: Սակայն մատուռները (վկայարաններ) քրիստոնէական պաշտամունքային իւրօրինակ կառոյցներ են, որոնք կառուցւում են վկայի՝ մարտիրոսի կամ նահատակի գերեզմանի կամ մասունքների վրայ: Մատուռները, ըստ էութեան, պարզ յօրինուածքով փոքրաչափ եկեղեցիներ են՝ ուղղանկիւն յատակագծով, թաղածածկ, երկթեք կտուրով, որոնք յաճախ կառուցուել են բնակավայրերում, ճանապարհների, աղբիւրների ակունքների մօտ, գերեզմանատներում, վանական համալիրներում: Յետագայում մատուռ են անուանել ընդհանրապէս փոքրածաւալ եկեղեցիները, սակայն իրականում մատուռի եւ եկեղեցու տարբերութիւնը ոչ թէ մեծութիւնն է, չափսերը, այլ մատուռի հիմքերը օրինուած եւ օծուած քարերով նուիրագործուած չլինելը: Մատուռներ են կոչւում նաեւ

եկեղեցիների օծուած աւանդատները, որոնք պատարագամատոյց անշարժ սեղան ունեն[27]:

ՀՀ անկախացումից յետոյ Սիւնիքի մարզում կառուցուել են հետեւեւեալ փոքրաչափ եկեղեցական կառոյցները.-

1.- Ս. Վարդան (Տեղ, 1997),

2.- Ս. Աստուածածին (Արծուանիկ, 2007),

3.- Ս. Տրդատ (Գորիս, 2007),

4.- Ս. Խաչ (Աշոտաւան, 2008),

5.- Ս. Յովհաննէս Մկրտիչ (Ճակատէն, 2009),

6.- Ս. Նարեկ (Ախլաթեան)[28]:

Այս ցանկում յիշատակուած Ճակատէնի նորակառոյց Ս. Յովհաննէս Մկրտիչ աղօթատունը գտնւում է գիւղից մօտ 3 կմ հարաւ՝ Ծաւ տանող ճանապարհի աջ կողմում՝ բարձունքի վրայ: Մատուռի կառուցումը սկսուել է 2009ին բարերար Արշաւիր Սարգսեանի հովանաւորութեամբ: Նոյն թուականին էլ մատուռն օծուել է Աբրահամ եպիսկոպոս Մկրտչեանի ձեռամբ[29]: Օծումից անմիջապէս յետոյ մատուռն ուխտատեղի է դարձել ոչ միայն ճակատէնցիների, այլեւ տարածաշրջանի բազմաթիւ հաւատացեալ հայորդիների եւ ուխտաւորաբար Սիւնիք այցելողների համար:

Բացի վերը թուարկուած կառոյցներից՝ Արարատ քահանայ Պօղոսեանի հրապարակած ցուցակում (Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի գահակալութեան շրջանում նոր կառուցուած, վերականգնուած եւ մասնակիօրէն վերանորոգուած եկեղեցիների ու վանքերի ցանկ), Սիւնիքի մարզում նշուած են նաեւ հետեւեալ եկեղեցական կառոյցները.- Ս. Աստուածածին (Եղվարդ, 2008), Ս. Աստուածածին (Քաջարան, 2010), Ս. Գրիգոր Նարեկացի (Տոլորս, 2005), Ս. Մարտիրոս (Տոլորս, 2010), Ս. Պօղոս-Պետրոս (Ոյծ, 2007)[30]:

---

[27] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ծիսական բառարան*, հրատ. կաթողիկոսութիւն հայոց մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1979, էջ 157-58. նաեւ՝ *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, գլխ. խմբ.՝ Յովհ. Այվազեան, Հայկական հանրագիտարանի հրատ., Երեւան, 2002, էջ 696:

[28] Մ. Մարտիրոսեան, Վ. Սարուխանեան, «Սիւնիքի նոր եկեղեցիները կամ Սուրիկ Խաչատրեանի «աստուածահաճոյ» գործը. նա որդու անունով մատուռ է կառուցել», https://hetq.am/hy/article/64990 մատչում՝ 15.10.2022:

[29] Ս. Ալեքսանեան, «"Դաւիթ բէկ" հասարակական կազմակերպութիւնը՝ Սիւնիքի սրբավայրերի եւ հնավայրերի պատշաճ պահպանութեան ջատագով», https://syuniacyerkir.am/davit-bek-hasarakakan-kazmakerputyuny-syuniqi-srbavayreri-e%D6%82-hnavayreri-patshach-pahpanutyan-jatagov մատչում՝ 23.10.2022:

[30] Տէր Արարատ քին. Պօղոսեան, «Նախանձախնդիր հայրապետը», ԺԱ:2011, *Էջմիածին*, էջ 85-92. նաեւ՝ https://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/2011/2011(11).pdf մատչում՝ 23.10.2022:

Տոլորս գիւղի Սուրբ Մարտիրոս մատուռը կառուցուել է Սուրէն Գրիգորեանի երազի հիման վրայ[31]:

Հրաշակերտ Սուրբ Մարտիրոս մատուռն օծել է Սիւնեաց թեմի առաջնորդական տեղապահ Զաւէն աբեղայ Եազիչեանը: Նորակառոյց մատուռում են մկրտուել տարիներ առաջ արկածից փրկուած Սուրէն Գրիգորեանի կինն ու երկու երեխաները:

Այսպիսով՝ ի տարբերություն հայ առաքելական եկեղեցու միւս թեմերի, Սիւնեաց թեմում նորակառոյց եկեղեցիների փոքր մասն ունի մշտամնայ ծխական քահանայ, ուստի այդ համայնքների բնակչութեան հոգեւոր պէտքերը հոգում է երթեւեկ քահանան: Տարուայ ընթացքում միքանի անգամ երթեւեկ քահանան պատարագ է մատուցում այդ եկեղեցիներում, ինչպէս նաեւ պարբերաբար ու ըստ պահանջի իրականացնում է այցելութիւններ այդ համայնքներ:

Մշտական քահանայ ունեցող եկեղեցիներ յաճախակի են այցելում համայնքի բնակիչները՝ մոմ վառելու եւ աղօթելու, ժամերգութիւններին մասնակցելու, հոգեւորականի հետ զրոցելու, ինչպէս նաեւ զանազան խընդ-

---

[31] 2009 Դեկտեմբերի 31ին Սիսիան-Գորիս մայրուղում տեղի ունեցած ինքնաշարժի արկածը ճակատագրական եղաւ 29ամեայ Սուրէնի համար: Տուժածին բժիշկներն ախտորոշել էին ողնուղեղի վնասուածք: Մօտ 3 ամիս անգիտակից վիճակում գտնուելուց յետոյ երիտասարդը բոլորի համար անսպասելի ոտքի է կանգնել ու պատմել հետեւեալը. «Յիշում եմ՝ մի դուռ կար՝ ուզում էի բացել, ներս մտնել, չէի կարողանում: Տարիքով մի մարդ եկաւ ու ասաց. մի՛ մտիր, կօշիկներդ հագիր, գնա այստեղից, դեռ քո ժամանակը չէ: Փորձում էի հագնել, մի կօշիկս չէր մտնում, էդ մարդը թէ՝ տար, տանը կը հագնես»Ա. Յովակիմեան, «Հոգու եւ մարմնի փրկութեան տաճար», https://www.lragir.am/2011/02/22/44445/ մատչում՝ 23.10.2022:

ռանքներով: Այսպիսով աւելի է ամրապնդում հօտի ու եկեղեցու միջեւ հոգեւոր կապը: Քահանաների զգալի մասը իրենց կատարած աշխատանքները գոհացուցիչ կամ նոյնիսկ բաւարար չեն համարում, ձգտում են ամէն կերպ աւելին անել, աւելի օգտաւէտ ու արդիւնաւոր դարձնել եկեղեցու ներհասարակական գործունէութիւնը, հասարակական կեանքում աւելի պահանջուած դարձնել եկեղեցու ներկայութիւնը:

2023 սեպտեմբերեան արհաւիրքի օրերին, երբ Արցախի հայութիւնը հարկադրուած լքեց իր պապենական օջախն ու ապաստանեց ՀՀի տարբեր բնակավայրերում, Գարեգին Երկրորդ կաթողիկոսի տնօրինութեամբ եւ օրհնութեամբ Սուրբ Էջմիածնի ընկերային ծառայութեան գրասենեակը եւ հայ առաքելական եկեղեցու հայաստանեան թեմերը լծուեցին Արցախից բռնի տեղահանուած մեր ազգակից-հայրենակիցների զանազան կարիքների հոգածութեան ու սփոփման մարդասիրական աշխատանքներին: Յատկապէս Սիւնեաց թեմերում իրականացւում են տեղահանուած արցախահայութեանը կացարաններով ու սննդով ապահովման աշխատանքներ: Ինչպէս միւս թեմերի, այնպէս էլ Սիւնեաց թեմի հոգեւորականներն իրականացնում են այցելութիւններ իրենց համայնքներում հաստատուած տեղահանուած ընտանիքներին: Հոգեւոր խնամքին եւ կարիքի գնահատմանը զուգահեռ հայաստանեան բոլոր թեմերում ցուցաբերւում է ընկերային աջակցութիւն՝ սնունդով, հագուստով եւ առաջին անհրաժեշտութեան պարագաներով ապահովելով տարբեր տեղերում հաստատուած արցախահայութեանը[32]: Սիւնեաց թեմը համակարգուած կերպով ամէն օր սնունդով ու ժամանակաւոր օթեւանով է ապահովել կամ յետագայ օրերին այլ մարզեր մեկնողներին է տրամադրել սնունդ, դեղօրայք եւ առաջին անհրաժեշտութեան պարագաներ:

Մայր աթոռ Ս. Էջմիածնում, ամենայն հայոց հայրապետի հանդիսապետութեամբ, սուրբ եւ անմահ պատարագ մատուցուեց սուրբ Տրդատի բաց խորանում՝ ժամը 10:30ին: Այս առիթով դուրս էր բերուել Աստուածամուխ Սուրբ Գեղարդը: Պատարագի սրբազան արարողութիւնից յետոյ կատարուեց աղօթքի յատուկ կարգ՝ ի զօրակցութիւն Արցախի եւ արցա-

---

[32] «Կաթողիկոսի տնօրինութեամբ հոգեւորականներն այցելում են իրենց համայնքներում հաստատուած արցախցի ընտանիքներին», https://azg.am/news/%D5%AF%D5%A1%D5%A9%D5%B8%D5%B2%D5%AB%D5%AF%D5%B8%D5%BD%D5%AB-%D5%BF%D5%B6%D6%85%D6%80%D5%AB%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B4%D5%A2-%D5%B0%D5%B8%D5%A3%D6%87%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1/ . նաեւ՝ «Մայր աթոռն իր աջակցութիւնն է ցուցաբերում բռնի տեղահանուած արցախահայութեանը», https://news.am/arm/news/784166.html մատչում՝ 08.10.2023:

խահայութեան: Արարողութեան ընթացքում հայրապետը Սուրբ Գեղարդով օրհնեց Հայաստան ու Արցախ աշխարհները եւ ներկայ հաւատացեալ ժողովրդին:

Համազգային աղօթքի կապակցութեամբ Սուրբ Էջմիածնից հայաստանեան տարբեր թեմեր էին տարուել ՀԱԵի սրբազան մասունքներ՝ հայ ժողովրդի հոգեւոր մխիթարութեան եւ օրհնութեան համար: 1 Հոկտեմբեր 2023ին Արցախի համար համազգային աղօթքի օրուան կապակցութեամբ, Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցի էր բերուել սուրբ Թադէոս առաքեալի մասունքը, Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի էր բերուել սուրբ Ստեփանոս Նախավկայի մասունքը, իսկ Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եւ Քաջարանի Վերին Հանդ գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցիներ էին բերուել Սուրբ Մատթէոս աւետարանչի եւ Սուրբ Անդրէաս առաքեալի մասունքները[33]: Նմանօրինակ միջոցառումները նպաստում են հայ հասարակութեան ու եկեղեցու միջեւ հոգեւոր կապերի աշխուժացմանն ու սերտացմանը: Եւ, ինչպէս իր տուած հարցազրոյցներից մէկում նշում է Սիւնեաց թեմի առաջնորդական տեղապահ Տէր Մակար վարդապետ Յակոբեանը, եթէ ունենանք այնպիսի հաւատք, որը դաւանել են մեր հայրերը, ապա մենք վստահաբար կ'ունենանք Աստծոյ օրհնութիւնը, սէրը մեր ընտանիքներից ներս: Այդ ժամանակ մեր սրտերին եւ հոգիներին կ'իշխեն խաղաղութիւնը, հանդուրժողականութիւնը, հայրենասիրութիւնը... [34]:

Այսպիսով՝ Սիւնեաց թեմը, որպէս ՀՀ բարգաւաճմանը, զօրացմանն ու հայ ժողովրդի լուսաւորութեան գործին լծուած համազգային հոգեւոր կառոյցի մաս, իր գործուն մասնակցութիւնն է ունենում համազգային նշանակութեան գրեթէ բոլոր ձեռնարկումներին եւ իր ունեցած ամէն մի փոքրիկ հնարաւորութիւն ծառայեցնում է այն նպատակին, որ կարողանայ իր զաւակներին բերել դէպի սուրբ եկեղեցու ճշմարիտ հաւատքը՝ դրանով նաեւ Մայր հայրենիքի զօրացման ու զարգացման ազգանուէր գործին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սիւնեաց թեմի հոգեւորականութիւնն իր գնահատելի գործունէութեամբ մասնակցում է Սուրբ Էջմիածնի եւ Սիւնեաց թեմի իրականացրած բարե-

---

[33] «Հոկտեմբերի 1ի համազգային աղօթքին եկեղեցիներ կը տարուեն սրբութիւններ ու սրբազան մասունքներ», https://mediamax.am/am/news/society/52694/. նաեւ՝ «Արցախի համար համազգային աղօթքի օրուայ առիթով դուրս կը բերուեն տարբեր սրբութիւններ եւ սրբազան մասունքներ», https://news.am/arm/news/783845.html մատչում՝ 08.10.2023:

[34] «Սիւնեաց թեմը՝ հոգեւոր օրրան...», https://syuniacyerkir.am/syunyats-temy-hoge%D6%82or-orran մատչում՝ 08.10.2023:

գործական, մարդասիրական միջոցառումներին: Թեմի նորակառոյց եկեղեցիներում քահանայագործող Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւորականները ներգրաւուած են ու իրենց գործուն մասնակցութիւնն են ունենում մարզի հասարակական ու ներհամայնքային կեանքի տարբեր ոլորտներում իրականացուող աշխատանքներին:

Այսպիսով՝ 1991ից յետոյ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնում հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: Ժամանակակից հայ ճարտարապետերն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր արհեստագիտամիջոցներ, լուծումներ ու մտայղացումներ, նորակառոյց եկեղեցիները, այդ թւում նաեւ Սիւնիքի մարզի եկեղեցիները, բացառապէս նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայ միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան եւ Սիւնիքի ժողովրդական ճարտարապետութեան ու շինարարական արուեստի լաւագոյն աւանդները:

Հայ առաքելական եկեղեցին կարիք չունի իր հաւատքն էժան միջոցներով ապացուցելու. նա իր գործը խոնարհությամբ եւ սրբօրէն կատարում է: Մնում է, որ իր զաւակները լսեն Աստծո ձայնն իրենց հոգում եւ երախտիքով փառաբանեն նրան:

NEWLY BUILT CHURCHES OF THE SYUNIK REGION (2001-2022)

(SUMMARY)

ARMAN MANUK MALOYAN
armanmaloyan1976@gmail.com

In the history of medieval Armenian Church architecture, the architectural school of Syunik has a truly honorable place with its talented architects, master builders and khachkar masters. Representatives of this architectural school left an immortal memory in the monastery of medieval Armenian Church architecture and raised the Armenian Church architecture to a new level.

In 1991, later in the newly independent Republic of Armenia, the Armenian Church architecture experienced a Revival, and a new period of growth. Modern Armenian architects and master builders now continue the best traditions of the medieval Armenian Church architecture applying new technologies, solutions and ideas in the building of new churches, including the churches of the Syunik region.

In this article we present the newly built churches and chapels of the Syunik region of Armenia (St. Mesrop Mashtots Church in Kapan, St. Gayane Church in Davit Bek, St. Sargis Church in Kashuni, St. Grigor Tatevatsi Church in Shinuhayr, St. Astvatsatsin Church in Shaki, St. Hripsime Church in Tolors, St. Stepanos Church in Darbas, St. Hovhannes Mkrtich Chapel in Chakaten, St. Martiros Chapel in Tolors). In the article, we present the architectural forms of the above-mentioned churches and chapels, the history of construction and other related issues.